ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 4-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էրատո Կոզակու-Մարկուլիսին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայաստանի եւ Կիպրոսի միջեւ երկկողմ բարեկամական հարաբերություններին, որոնց համար կարեւոր հիմք են ծառայում երկու ժողովուրդների դարավոր կապերը եւ հայ համայնքի պատմական ներկայությունը Կիպրոսում: Նորին Սրբությունը կարեւորեց Հայաստանի եւ Կիպրոսի համագործակցությունը միջազգային կառույցներում՝ ի խնդիր երկու ժողովուրդների շահերի պաշտպանության:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Կիպրոսի կառավարությանը՝ հայ համայնքի հոգեւոր եւ ազգային կյանքի, կրթական ու մշակութային հաստատությունների հանդեպ մշտապես ցուցաբերվող ուշադրության համար:

Իր հերթին Կիպրոսի ԱԳ նախարարն անդրադարձավ հայ համայնքի դերակատարությանը երկրի կյանքում՝ ընդգծելով, որ հայ համայնքը հարստացնում է Կիպրոսն ու նրա մշակույթը եւ ամուր կամուրջ է հանդիսանում երկու ազգերի միջեւ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Կիպրոսի ԱԳ նախարարը քննարկեցին նաեւ Հյուսիսային Կիպրոսի գրավյալ տարածքում գտնվող, համամարդկային արժեք ներկայացնող քրիստոնեական սրբավայրերի մտահոգիչ վիճակը: Վերջում Նորին Սրբությունն իր աղոթքն ու օրհնությունը հղեց Կիպրոսի ժողովրդին՝ մաղթելով, որ Կիպրոսի խնդիրն իր արդար լուծումը գտնի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՒ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ավետման տոնն է, սիրելիներ, որը հավատավոր մեր ժողովրդի կյանքում հռչակված է որպես Մայրության ու գեղեցկության օր եւ Սուրբ Աստվածածնի լուսեղեն օրինակն է բերում կանանց ու մայրերին: Այսօր մենք բարեբանում ենք Սուրբ Կույսին եւ հայցում նրա գթառատ բարեխոսությունը իր Որդու եւ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի առաջ: Այս տարի Ավետման տոնի հուսառատ օրը մեր հոգիներին հնչում է նաեւ ավետիսը մեր Տիրոջ Հարության, որով մարդկությունը ժառանգեց երկնապարգեւ շնորհները հավիտենական կյանքի: